

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սամվել Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Դուբնա (Ռուսաստանի Դաշնություն), 2019թ. մարտի 24-ից 26-ը

4. Հրավիրող կողմը

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ (այսուհետ՝ ՄՀՄԻ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նստաշրջանի աշխատանքներին

6. Քննարկված թեմաները

- ՄՀՄԻ 2019թ. բյուջեն,
- ՄՀՄԻ անդամավճարների հաշվարկման նոր մեթոդաբանությունը 2020-2022 թթ. համար,
- «NICA» կոլալոգիերի վրա իրականացված ծրագրերի ձեռքբերումները և գալիք ծրագրերը,
- Հայաստանի Հանրապետություն - ՄՀՄԻ համագործակցության ծրագրերի կոմիտեի նիստի ընթացիկ հարցեր,

- Սեյսմիկ անվտանգության ապահովման ոլորտում ՄՀՄԻ - Հայաստան համագործակցություն,
- ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի 2019թ. մարտի 22-ից 23-ը կայացած նիստի արդյունքները,
- և այլ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նստաշրջանին քննարկվել են ՄՀՄԻ գիտական խորհրդի 125-րդ նստաշրջանի առաջարկությունները, «NICA» կոլաբորեի վրա 2018թ. իրականացրած ծրագրերի մասին հաշվետվությունները, ՄՀՄԻ 2018թ. բյուջեի կատարողականը, ՄՀՄԻ 2018թ. գործունեության արդյունքները, 2019թ. մարտի 22-ից 23-ը կայացած ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի նիստի արդյունքները, ՄՀՄԻ ֆինանսական գործունեության աուդիտորական ստուգման արդյունքները, ինչպես նաև «Գերծանր մասնիկների» գործարանի և «Դուբնա» ինժեներական դպրոցի ստեղծման և կարգավիճակի հետ կապված մի շարք հարցեր:

ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նստաշրջանին ներկայացվել և քննարկվել են ՄՀՄԻ կողմից գիտական աստիճաններ շնորհելու իրավունք իրացնելու ուղղությամբ տնօրինության ջանքերը, ՄՀՄԻ-ի և անդամ-պետությունների միջև «Գիտահետազոտական և կրթական համագործակցային ծրագրերի մասին» Կարգի նախագիծը, ՄՀՄԻ անդամավճարների հաշվարկման նոր մեթոդաբանությունը 2020-2022թթ. համար, ՄՀՄԻ ինովացիոն զարգացման նոր ծրագիրը և այլն:

2019թ. մարտի 25-ին Դուբնայում կայացել է նաև Հայաստանի Հանրապետություն - ՄՀՄԻ համագործակցության ծրագրերի կոմիտեի նիստը, որի աշխատանքներին մասնակցել է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ, ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահ Սամվել Հարությունյանը: Նիստի ընթացքում քննարկվել են «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)», Գառնիի գեոֆիզիկական աստղադիտարանի և

ՄՀՄԻ միջև համագործակցության ընթացիկ հարցեր, ինչպես նաև համագործակցային ծրագրերի նախագծեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նստաշրջանին քննարկվել և հաստատվել են ՄՀՄԻ 2019թ. բյուջեն, 2019թ. մարտի 22-ից 23-ը կայացած ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի նիստի արձանագրությունը, 2018թ. բյուջեի կատարողականը, ՄՀՄԻ ֆինանսական գործունեության աուդիտորական ստուգման արդյունքները:

ՄՀՄԻ տնօրեն Վ. Մատվենի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ առաջիկայում «NICA» կոլաբորացիայի վրա իրականացվող գիտահետազոտական ծրագրերում Հայաստանի Հանրապետության գիտնականների մասնակցության ծավալը մեծացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու նպատակով:

ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նստաշրջանի շրջանակներում կայացած Հայաստանի Հանրապետություն - ՄՀՄԻ համագործակցության ծրագրային կոմիտեի նիստի ավարտին ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն ու ՄՀՄԻ փոխտնօրեն Միխայիլ Իտկիսը ստորագրել են արձանագրություն, որով ևս մեկ անգամ հաստատվել են սեյսմիկ մեծ զգայություն ունեցող համակարգերի ստուգաչափման աշխատանքներ սկսելու և հետագայում Հայաստանի Հանրապետության տարածքում տեղադրելու պատրաստակամությունը: Արձանագրության պատճենը տեղադրված է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի պաշտոնական կայքում:

Դուբնա այցի շրջանակներում ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն ունեցել է մի շարք հանդիպումներ Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնի (CERN) և այլ միջազգային միջուկային կենտրոնների ներկայացուցիչների հետ: Հանդիպումների առանցքային թեման՝ վերոնշյալ միջուկային կենտրոնների գիտական ծրագրերին հայ գիտնականների և մասնագետների մասնակցության աճի շուրջ քննարկումներն էին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝
եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

2019թ. սեպտեմբերի 4-17-ը Սանկտ Պետերբուրգում (Ռուսաստանի Դաշնություն) անցկացվելու է ՄՀՄԻ, Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնի, Ռուսաստանի ազգային ակադեմիայի և ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարարության կողմից համատեղ կազմակերպված «Բարձր էներգիաների ֆիզիկայի եվրոպական դպրոց»: ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին առաջարկվել է կազմակերպել Հայաստանի գիտական կենտրոնների և բուհերի երիտասարդ մասնագետների մասնակցությունը վերոնշյալ միջոցառման աշխատանքներին:

Առաջարկվել է ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի հաջորդ նստաշրջանն անցկացնել 2019թ. նոյեմբերին Հանոյում (Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն):

10. Ստորագրությունը, ամսաթիվը

29.03.2019թ.